ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիս, 2023 թվականի № 42-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 70-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 15-րդ կետերը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ և 25-րդ կետերը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի № 70-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի № 70-Լ որոշման № 2 հավելվածով հաստատված՝ 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար նախատեսված Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

22 հունիս, 2023 թվականի

ք. Երևան